

Տրիխոֆիտիա (մկնատամ)

Հիվանդության բնորոշումը. Տրիխոֆիտիան (մկնատամ) ինֆեկցիոն հիվանդություն է, որը բնորոշ է մաշկի վրա սահմանափակ թեփակալված հատվածների առաջացումով, որոնք գուրկ են մազածածկից:

Հարուցիչը. Երկկճղակավոր կենդանիների մկնատամի հիմնական հարուցիչը *Tr. Verucosum* սունկն է: Այն աճում է ոչ միայն մաշկի և մազերի, այլև՝ խոտի, ծղոտի, գոմաղբի վրա:

Մնկերը օժտված են բարձր կայունությամբ.

- հողում պահպանվում են 142 օր,
- գոմաղբում՝ 240 օր:

Մինչև 100°C ջերմաստիճանում սպորները ոչնչանում են 1 ժամում:

Հիվանդության տարածման ուղիները. Հիվանդության նկատմամբ բարձր ընկալունակություն ունեն 2 ամսականից մինչև 1 տարեկան հորթերը: Հիվանդությունը առավել հաճախ հանդիպում է աշնան, ձմռան և վաղ գարնան ամիսներին:

Հարուցիչը հիվանդ կենդանիներից առողջներին է փոխանցվում անմիջական շփման և առարկաների միջոցով: Տարածման գործում մեծ դեր են խաղում մկնանման կրծողները:

Հիվանդանում են նաև մարդիկ: Վարակվում են հիվանդ կենդանիների հետ շփումից:

Կլինիկական նշանները. Հիվանդության գաղտնի շրջանը տևում է 8-30 օր: Խոշոր եղջերավոր կենդանիների մոտ առավելապես ախտահարվում է գլխի, պարանոցի, երբեմն մեջքի, հետանցքի հատվածի մաշկը, իսկ հորթերի մոտ՝ բերանի և աչքերի շուրջը, ճակատի և պարանոցի մաշկը, ազդրերի և հետանցքի շուրջը:

Թեև մկնատամից կենդանիները չեն սասկում, բայց այս հիվանդությունը մեծ տնտեսական վնասներ կարող է հասցնել ձեր ֆերմային, մասնավորապես.

- դանդաղեցնում է մատղաշի աճը,
- ախտահարված հատվածները դարպաս են ստեղծում այլ ինֆեկցիաների ներթափանցման համար,
- վտանգ է ներկայացնում մարդկանց առողջության համար,
- բուժման համար ծախսվում է փող և աշխատանք,
- հիվանդ կենդանիներից ստացված մթերքը լինում է ցածրարժեք:

Կանխարգելումը և պայքարի միջոցառումները. Հիվանդության կանխարգելման ամենաարդյունավետ և հեշտ միջոցը մինչև 1 ամսական հորթերի վակցինացումն է: Հիվանդության կանխարգելման և բուժման համար առաջարկվում են բարձր իմունածին ակտիվությամբ օժտված կենդանի, բայց թուլացված սնկերից պատրաստված վակցինաներ TՓ-130 և ՄՏՓ-130: Նշված վակցինաները բավականին

մատչելի են, մեկ հորթի պատվաստման համար անհրաժեշտ է 2 դոզա ՄՏՓ-130 վակցինա:

Կենսապատրաստուկները օգտագործում են ներմկանային, երկնվագ, նույն հատվածում՝ 10-14 օր ընդմիջումով: Վակցինացման արդյունավետությունը կախված է ճիշտ իրականացումից: Դրա համար խորհուրդ է տրվում, որ վակցինացումը իրականացնի փորձառու անասնաբույժը:

Հորթերի մոտ իմունիտետը ձևավորվում է 2-րդ վակցինացումից 21-30 օր հետո և պահպանվում է 8-10 տարի:

Մկնատամի կանխարգելման համար շատ կարևոր է նաև.

- կենդանիների պահվածքի նորմերի պահպանումը, Մկնատամի տարածմանը նպաստում են կենդանիների խիտ պահվածքը, անասնագումի վատ օդափոխությունը և լուսավորումը: Արևի ազդեցությունից մկնատամի սնկերը ոչնչանում են,
- անասնաշենքերի կանխարգելիչ ախտահանումները,
- կրծողների դեմ պայքարը:

Եթե ձեր ֆերմայում հայտնաբերվել է մկնատամի դեպք, անպայմանորեն անհրաժեշտ է իրականացնել հիվանդության հետագա տարածումը կանխող և հիվանդ կենդանիների բուժման միջոցառումներ:

Բուժման ժամանակ օգտագործվում է նույն վակցինան՝ երկնվագ, կրկնակի բաժնեչափով: Վակցինայով բուժման դեպքում այլ դեղորայքային միջոցների օգտագործման անհրաժեշտություն չկա, իսկ եթե տարածված ախտահարումներ են, վակցինան ներարկում են եռանվագ:

Կեղերը (ախտահարված մասերը) մշակում են փափկացնող նյութերով, օրինակ՝ վազելին, այնուհետև կիրառում հետևյալ քսուքները.

- Յամ քսուքը,
- ՌՌՄԿ քսուքը,
- ՄԿ-9-ը քսուքը,

1 քլորային յոդի 3-5%-ոց լուծույթը: